

ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հայ ժողովրդի համար ինչպես ազգային, այնպես էլ եկեղեցական մեծագույն տոներից մեկը Վարդանանց տոնն է: Այդ տոնը միաժամանակ համընկնում է Ամենայն Հայոց Հայրապետի անվանակոչության տարեդարձին:

Այս տարի էլ Մայր Աթոռում հանդիսությամբ նշվում են այդ զույգ տոները:

Փետրվարի 10-ին, կիրակի օրը, երեկոյան ժամերգությունից հետո, Մայր տաճարում Վարդանանց տոնի առթիվ կատարվում է նախատոնակի հանդիսավոր ժամերգություն:

Փետրվարի 11-ին, երկուշաբթի.—Տօն Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց՝ հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին.

Ժամը 10.30-ին Ավագ խորանի վրա սկսվում է հանդիսավոր ս. պատարագի արարողությունը: Օրվա պատարագիչն էր Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը, որը և հավարտ ս. պատարագի Իշման Ս. Սեղանից խոսում է քարոզ՝ Վարդանանց խորհրդին նվիրված:

Պատարագից հետո, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է Հայրապետական մաղթանք:

Ժամը 13.30-ին Վեհարանի հանդիսությունների շքեղ դահլիճում սկսվում է Վարդանանց հանդիսությունը:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, մայրավանքի պաշտոնեությունն ու աշխատավորությունը և այլ հյուրեր:

Հանդիսությանը ներկա էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը:

Հանդիսությունը սկսվում է Հայկական ՍՍՀ պետական հիմնի նվագով, որից հետո հոգևոր ճեմարանի սաները կատարում են «Ճեմարանի քայլերգ» խմբերգը:

Հանդիսության բացման խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը: Այնուհետև Վարդանանց խորհրդի մասին բանախոսություն է կարդում հոգևոր ճեմարանի դասախոս Տ. Անանիա վրդ. Արաքաջյանը, որն ի միջի այլոց շեշտեց:

«Այս կապույտ երկնքի տակ ապրող ամեն մի ժողովուրդ ունի իր «Իլիականը»:

Իր պատմության ծանր օրերին, այն ոգեվորող մի օրինակ է հանդիսանում տվյալ ժողովրդի համար, տառապանքի ու գերության շրջաններին դառնում է մի ջինջ, անաղարտ երազ ու վերջապես ուրախության և փառքի օրերին, Հեմինգուեյի խոսքերով ասած, «Տոն, որ միշտ քեզ հետ է...»:

«Տոն, որ միշտ քեզ հետ է...»:

Ավարայրի խորհուրդ: Ի՞նչ ես այսօր դու մեզ համար, աշխարհի վրա ապրող, իր ազատության, իր հավատքի ու նրա կուսության վրա դողդողացող յուրաքանչյուր հայի համար:

Պատարագի նշխար: Մայրական օրոր: Թե պանդխտության ծանր օրերի սփոփեցնող մրմունջ-երգ:

Ինչումն է բո վեհությունն ու մեծությունը, որ այսօր, մոտ 15 դար հետո, 451-ի

մայիսի 26-ը հիշելիս, դու ստիպում ես մեզ պատանու նման ոգևորվել ու զգացնել տալ, թե ինչպես է արյունը ջերմանում մեր երակներում, առնականանում ձայնը ու անհասկանալի մի կրակով բոցավառվում հայացքը»:

Այնուհետև հարգելի բանախոսը, համառոտակի շարունակելով իր խոսքը, վերջում եզրակացնում է.

«Այսօր Ավարայրի ճակատամարտից անցել է 1529 տարի: Շատ բան փոխվել է կյանքում: Նույնը՝ հայ իրականության մեջ: Սակայն Ավարայրի լույսը այս 15 դարերի ընթացքում մեր ժողովրդի պատմության նեղ օրերին առաջնորդը հանդիսացավ հայ ոգեկանության: Ամեն անգամ Ավարայրի երգը շուրթերին հայը մտնում էր պատերազմի դաշտ ու փյունիկի նման կենդանի մնում:

Ավարայրի վերապրումն էր մեծ Սարդարապատը, ուր հայը մեկ անգամ ևս աշխարհին ապացուցեց, որ այնքան ժամանակ, քանի դեռ կովում է, իրավունք ունի ապրելու:

Ու այսօր էլ մեր ազատագրված ոչ վերակենդանացած մայր հայրենիքում՝ Սովետական Հայաստանում, հարաժամ մղվում են նորանոր ավարայրներ, մղվում են գիտության, արվեստների, բժշկության, աստղագիտության և այլ մարզերում: Ավարայրներ, որոնք ժամ առ ժամ ավելի են ծաղկեցնում, շենացնում և պատվի աստիճաններով վեր բարձրացնում մեր փոքրիկ, սակայն պատմական Հայոց երկիրը:

Ավարայր է ամենօրյա հայ սփյուռքը, որտեղ ամեն անհատ անդուլ կերպով, համարյա բնազդական մի մղումով, ջանքեր է թափում կուլ չգնալ օտարին ու հայ մնալու...

Մեծ եղավ Եկեղեցու դերը 451 մայիսին: Հավատարիմ մնալով «Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց իւրոց» քրիստոսավանդ պատգամին, հայ հոգևորականությունը ոգին դարձավ Ավարայրի ողջ դեպքերի:

Ու այսօր էլ շարունակվում է «Վասն Յիսուսի, վասն հայրենեաց» նշանաբանով նրա առաքելությունը այս երկրագնդի համարյա ողջ սփռվածքի վրա, ուր ապրում է հայության մի սրբազան մասունքը:

Փոխվել են անունները... Չկա այլևս Հովսեփ կաթողիկոս, չկան Ղևոնդ, Եզնիկ... Սակայն նույնանում է առաքելությունը, նույնն են տեսիլքները մեր մեծ հայրապետների, եպիսկոպոսների:

Ու թերևս այդ է պատճառը, որ ամեն տեղ, ամեն ժամանակ հայը միշտ ամուր փարված է մնում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն:

Ու թերևս հենց այստեղ պետք է որոնել Վարդանանց խորհրդի մեծության արժեքը, բանալին:

Իր հավատասիրության, եկեղեցասիրության, ազգային և կրոնական ավանդույթները սպասիվելու ոչնչի առջև կանգ չառնող, ամեն ինչ զոհաբերող հավատքի մեջ:

Եվ այսօր Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին, մեր երախտապարտ Եկեղեցին օրհնում և փառաբանում է քեզ, ով քաջդ Վարդան:

Փառք քեզ ու քո 1036 արի կտրիճներին»:

Բանախոսությունից հետո սկսվում է հանդիսության գեղարվեստական բաժինը: «Նորահրաշ» և «Արիացեալք» շարականների երգեցողությունից հետո, արտասանություններով հանդես են գալիս Հովսեփ սրկ. Պալրգյանը, Հայկ սրկ. Չիլինգարյանը (Գ լսարան) և Մեսրոպ Խաչիկյանը (Ա լսարան), որոնք հաջորդաբար կատարում են հատված Եղիվարդի (Եղիշե պատրիարք) «Կարմիր Ջորավար» պոեմից, Ռ. Պատկանյանի «Վարդանի երգը» բանաստեղծությունը և «Վարդանի ճառը» հատվածը Եղիշեից ստեղծագործությունները:

Վահրամ սրկ. Տերտերյանը, Խաչիկ սրկ. Մարտիրոսյանի նվագակցությամբ, կատարում է Մակար Եկմալյանի «Լռեց, ամպերը...» մեներգը: Այնուհետև հոգևոր ճեմարանի երգչախումբը՝ ղեկավարությամբ երաժշտության դասախոս Տ. Մասիս վրդ. Գալստյանի, հաջորդաբար կատարում է «Ով մեծասքանչ դու լեզու», «Ով Հայոց աշխարհ», «Ով դու բարեկամ» և «Ազնիվ ընկեր» խմբերգերը:

Հանդիսության վերջում օրհնության խոսքով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը շեշտելով Վարդանանց խորհրդի նշանակությունը, հորդորում է, որ միշտ բոլոր հայորդիները իրենց հոգում վառ պահեն Վարդանանց ոգեկանության անմար հիշատակը:

Հանդիսությունն ավարտվում է խմբովին երգված «Հայր մեր»-ով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով: